# ԱԶԳ

## Ի ԴԻՒԱՆԷ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱԶԳԻՍ

Ըստ թախանձագին խնդրանաց Գրիգոր սարկաւագի Մելքիսեդեկեան առ Ս. Հայրապետն, արձակել զնա ի միաբանութենէ Մայր Աթոռոյ և ի կոչմանէ սպասաւորութեան Ս. Եկեղեցւոյ—Ն. Ս. Օծութիւն հաճեալ էր կոնդակաւ իւրով յանձն առնել Գերապատիւ Տ. Թեմական Առաջնորդի Վրաստանի և Իմերեթի Սրբազան Գէորգ Արքեպիսկոպոսի կոչել զխնդրատու Գրիգոր Սարկաւագն, զգուշացուցանել զնա և յորդորել դառնալ անդրէն ի Մայր Աթոռ: Սակայն ըստ գրութեան Ն. Գերապատուութեան յիշեալ սարկաւագն ինքնին բերեալ և յանձնեալ է զուրարն իւր՝ հրաժարելով խստիւ ի միաբանակցութենէ Մ. Աթոռոյս: Առ այս Ն. Սրբութիւն Կոնդակաւ յանձն արար Սինոդի Ս. Էջմիածնի հանել զանուն նորա ի կարգէ հոգևորականաց և դասել ի կարգս հարկատուաց՝ այսուհետև ճանաչելով զնա որպէս աշխարհիկ ոք:

---

**Նորին Ս. Օծութիւն Վեհափառ Հայրապետն ազգիս յայտնէ զիւր Հայրական շնորհակալիս հանդերձ Հայրապետական օրհնութեամբ Գեր. Առաջնորդաց, բարեշնորհ փոխանորդաց և Վանահարց, Արժանապատիւ Աւագ երիցանց և քահանայից և բարեպաշտօն Ազգայնոց, և վարչութեանց Ազգ. հաստատութեանց, որք որդիական զգացմամբ շնորհաւորեցին զնոր տարին և զտօն անուանակոչութեան Նորին Ս. Վեհափառութեան:**

# ԿՐՕՆԱԿԱՆ

## ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

(Պարզ քարոզ)

«Կանայք, հնազանդ լերուք արանց ձերոց, որպէս և վայել է ի Տէր: Արք, սիրեցէք զկանայս ձեր և մի՛ դառնացուցէք զնոսա: Որդիք, հնազանդ լերուք ծնողաց ձերոց յամենայնի, զի այն է հաճոյ առաջի Տեառն: Հարք, մի՛ զայրացուցանէք զորդիս ձեր, զի մի՛ տրտմեսցին: Ծառայք, հնազանդ լերուք տէրանց ձերոց յամենայնի, մի՛ առ ականէ ծառայութեամբ՝ իբրև մարդահաճոյք, այլ միամտութեամբ սրտի երկնչել ի Տեառնէ» (Կող. Գ. 18—22 և Եփ. Զ. 1—10):

Պօղոս Սրբազան առաքեալն որև է տան մէջ սէր, խաղաղութիւն, միաբանութիւն և քաղցր կենակցութիւն յարատև ամրապնդելու նպատակաւ, որոշ որոշ սահմանում է գերդաստանի բոլոր անդամոց պարտքը և իրաւունքը: Պարտքով և իրաւունքով կապուած են կինն՝ մարդոյ հետ, մարդն՝ կնոջ հետ, ծնողներն՝ զաւակաց հետ և զաւակներն՝ ծնողաց հետ. ծառաներն իւրեանց տէրանց հետ և տէրերն ծառաների հետ: Պարտուց և իրաւանց անթերի կատարելովը միայն կարելի է թագաւորեցնել գերդաստանների մէջ համերաշխութիւն, միութիւն և սիրով համեմայ կենցաղավարութիւն: Ընդհակառակն՝ ուր որ ճշտիւ չեն կատարուում պարտքերն և իրաւունքներն, անդի են ունենում խէթ և ատելութիւն, քայքայուում են սիրոյ և միաբանութեան կապերն, տիրում է խռովութիւն և բաժանումն, և Աստուծոյ օրհնած տունն դառնում է տուն ցաւոց և տուն դառն կենակցութեանց: Որպէս զի կարողանանք լաւ հասկանալ իւրաքանչիւրի պարտքը և իրաւունքը, այս պատճառաւ խօսենք ամեն մէկի վերայ առանձին առանձին:

Ա. Կանայք, հնազանդ եղէք ձեր մարդոց, ինչպէս և վայել է Տիրոջ՝ Քրիստոսի: — Կնոջ և մարդոյ պարտուց և իրաւանց մասին արդէն